ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետում «ոչ ավելի քան երեք անգամ» բառերը փոխարինել «ոչ ավելի, քան մեկ անգամ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

«__»_____ 2024թ.

ք. Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշվում է, որ Երևան քաղաքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի հունիսի 18-ի թիվ 1-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ընդունել է Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը՝ կարգավորելով Երևան քաղաքի ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը:

Որոշման հավելվածի 71-րդ կետը սահմանում է Ավագանու նիստում հարցերի քննարկման ընթացակարգը, ի թիվս այլ ընթացակարգային դրույթների նախատեսելով նաև, որ մինչև քվեարկության անցկացումը՝ Խմբակցության ղեկավարի պահանջի դեպքում, հայտարարվում է ընդմիջում մինչև տասնհինգ րոպե, ընդ որում՝ ընդմիջումը յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կարող է տրվել միայն մեկ անգամ, իսկ յուրաքանչյուր Խմբակցության ղեկավարը նույն նիստի ընթացքում կարող է ընդմիջում պահանջել ոչ ավելի քան երեք անգամ:

Վերոգրյալ կարգավորման բովանդակությունից պարզ է դառնում, որ գործող օրենսդրությամբ յուրաքանչյուր Խմբակցության ղեկավարին ավագանու նիստի ընթացքում հնարավորություն է տրվում 3 անգամ պահանջելու ընդմիջում, ինչը գործնականում հաճախ հանգեցնում է ավագանու նիստերի բնականոն գործունեության խաթարմանը, այդ թվում՝ խոչընդոտ հանդիսանում Երևան քաղաքի ավագանու

կանոնակարգով սահմանված ժամկետում ավագանու նիստի անցկացման և օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի քննարկման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով նախատեսվում է սահմանել, որ յուրաքանչյուր Խմբակցության ղեկավարը նույն նիստի ընթացքում կարող է ընդմիջում պահանջել միայն մեկ անգամ:

Նախագծով նախատեսված կարգավորումների նպատակն է ապահովել ավագանու նիստերի բնականոն գործունեությունը և դրանց անցկացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ